ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ԳՀԱՊՁԲ-20-22/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 23.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Տ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 27.12.2019թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-20-22/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 22 000 000 (քսաներկու միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ պատրաստության գլխավոր վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան Աճառյան33/4 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011024537 | Հ/Հ 1570020262330300 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00112776 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ | Տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-22/2-1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 3-րդ |
| 1 | Համակարգչային պլանշետ (Ռազմական էլեկտրոնային պլանշետ) | հատ | 50 | 440 000 | 22 000 000 | 50 |

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Տ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ տնօրեն

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-22/2-1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | անվանումը | CPV կոդը | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Համակարգչային պլանշետ (Ռազմական էլեկտրոնային պլանշետ) | 30211290/501 | 22000000 | 22000000 | 22000000 | 22000000 | 22000000 | 22000000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ս. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ տնօրեն

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ